/07/1

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 12 » 07 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0124-23

Ձեռնարկողը՝ ***«ԿԱՐԻՍՄԱ» ՍՊԸ***
ք. Երևան, Նոր Արեշ 9-րդ փողոց, տուն 34

Գործունեությունը՝ ***Արամուսի բազալտների հանքավայրի «ԿԱՐԻՍՄԱ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 7 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0124-23

«12» հոկտեմբեր **2023թ.**

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԿԱՐԻՍՄԱ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԿԱՐԻՍՄԱ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Արամուս բնակավայր

Ներածական մաս. Արամուսի բազալտների հանքավայրի «ԿԱՐԻՍՄԱ» տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյանի ենթաշրջանում և տեղակայված է Արամուս գյուղից 1.3կմ Զովքից 2.6 կմ, Ձորաղբյուրից 4.5 կմ, Գեղաշեն և Կամարիս գյուղերից համապատասխանաբար 5.5 կմ և 2.5 կմ հեռավորությունների վրա:

Հանքավայրի տարածքը ներկայացված է համայնքային ու քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի տարածքում նախատեսվում է կազմակերպել 9479–2011 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջներին համապատասխանող երեսպատման բլոկների, ինչպես նաև «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏՕՍՏ–ի տեխնիկական պահանջներին համապատասխանող խճի ու «Песок для строительных работ» 8736-2014 ГОСТ–ի պահանջներին համապատասխանող ավազի արդյունահանում:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի ԿԱՐԻՍՄԱ տեղամասի պաշարները հաստատելու մասին» 26. 05. 2022թ. N 937-Ա հրամանով:

Ստորև բերվում են հաստատված պաշարների եզրագծի ծայրակետերի կոորդինատները.

1. X =4455602.7 Y =8470522.7 4. X =4455232.9 Y =8470440.0
2. X =4455485.4 Y =8470379.2 5. X =4455404.8 Y =8470492.3
3. X =4455314.1 Y =8470340.0 6. X =4455534.0 Y =8470588.6

Հանքավայրի տեղամասը հետախուզվել է հորատանցքերով, հետախուզահորերով, փորձնական բացահանքով և դրանց համապատասխան նմուշարկումով, որոնցով ձևավորված հետախուզացանցը թույլ է տվել պաշարները գնահատել B կարգով:

Հաշվարկվել են բազալտների B կարգի 319.9 հազ.մ³ պաշարներ:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության տեղամասը վերագրվում է 1-ին խմբին:

Տեղամասի բազալտները ներկայացված են երկու շերտով. վերին՝ խոռոչավոր, ճեղքավոր և ստորին՝ հոծ, մանրամիջահատիկ, տեղ-տեղ ծակոտկեն, մոխրագույն և մուգ մոխրագույն տարատեսակներով:

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից տեղամասի մշակումը նախատեսվում է կատարել բաց եղանակով՝ հիմնվելով «Կարիսմա» տեղամասի լեռնաերկրաբանական բարենպաստ պայմանների, բազալտի շերտի սակավաթեք և փոքր խորության վրա տեղադրված լինելու հանգամանքների վրա:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- Բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթում՝ մոտ 370.0 մ,
- Բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթում՝ մոտ 175.0 մ,
- Մշակվող բազալտների հաստաշերտի միջին հզորությունը՝ 7. 6 մ,
- Բացահանքի առավելագույն խորությունը՝ մոտ 20. 0 մ,
- Բացահանքի համար օտարման ենթակա մակերեսը՝ 4. 2 հա,
- Հանքաստիճանի բարձրությունը բացահանքի վերջնական դիրքում՝ 2. 5 մ,
- Հանքաստիճանի թեքությունը՝ 90°,
- Անվտանգության բերմայի լայնությունը՝ 0.75 մ,
- Բացահանքի կողի առավելագույն թեքությունը՝ 78°:

Արամուսի հանքավայրի «Կարիսմա» տեղամասի բազալտների պաշարների եզրագծումն ու հաշվարկը կատարված է 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի հիմքի վրա:

Արամուսի բազալտների հանքավայրի «Կարիսմա» տեղամասի պաշարների վերաբերյալ տվյալներ:

Բլոկի համարը և պաշարների կարգը	Մակաբացման ապարների ծավալը, հազ.մ³	Օգտակար հանածոյի պաշարները, հազ.մ³	Մակաբացման միջին գործակիցը, մ³/ մ³
Բլոկ 1-B	28.6	154.1	0.19
Բլոկ 2-B	26.5	165.8	0.16
Ընդամենը հանքավայրում	55.1	319.9	0.17

«Կարիսմա» տեղամասի օգտակար հաստվածքը ներկայացված է վերին շերտի ճեղքավորված և խոռոչավոր, իսկ ստորին շերտի թարմ բազալտներով, որոնք բնութագրվում են համապատասխանաբար 0.2-ից մինչև 4.4մ (միջինը 1.4մ) և 2.3-ից մինչև 13.3մ (միջինը 6.2մ) հզորություններով:

Տեղամասի շահագործումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով. վերին շերտի ճեղքավորված, խոռոչավոր բազալտները նախատեսվում է մշակել դրանց մեխանիկական փխրեցմամբ, իսկ ստորին շերտի թարմ բազալտների արդյունահանումն իրականացնել հորատասեպային եղանակով:
Վերին շերտի խոռոչավոր և ճեղքավոր ու ստորին շերտի թարմ բազալտների բլոկների մշակումից առաջացած ոչ կանոնավոր տեսքի, բլոկների համար ոչ պիտանի բազալտները նախատեսվում է էքսկավատորներով բարձել ավտոինքնաթափերի մեջ և տեղափոխել ջարդող-տեսակավորող կայանք:
Արամուսի բազալտների հանքավայրի «Կարիսմա» տեղամասի բացումը նախատեսվում է իրականացնել հետևյալ կերպ. մինչև 1505.0մ նիշ ունեցող հորիզոնները կիսախրամներով, իսկ 1502.0-1505.0 մ նիշ ունեցողները՝ խրամներով:
Բոլոր հորիզոնները նախատեսվում է բացել մուտքային ավտոճանապարհներից, կտրող խրամի միջոցով:
Քանի որ տեղամասում արդեն առկա են մոտեցող ավտոճանապարհներ, լեռնակապիտալ աշխատանքներն ընդգրկում են միայն մակաբացման ապարների հեռացում և օգտակար հանածոյի արդյունահանում ստորև բերվող ծավալներով.
-մակաբացման ապարների հեռացում՝ 4561 մ^3,
-օգտակար հանածոյի հանույթ՝ 1300 մ^3:
Բացահանքի շինարարական շրջանում բացվում և աշխատանքային վիճակի են բերվում 1520.0 և 1517.5մ հատակի բացարձակ նիշ ունեցող աստիճանները:
Մշակման համակարգ: Տեղամասի շահագործումը նախատեսվում է իրականացնել խորացող մշակման համակարգով՝ աշխատանքային աստիճանի Հա=2.5մ բարձրությամբ և արտաքին ժամանակավոր լցակույտաառաջացմամբ: 1507.5մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց իրականացվելու է ներքին լցակույտաառաջացում:
Հանութային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական մեկկողանի մշակման համակարգով:
Մշակման համակարգի տարրերը հաշվարկված են համաձայն արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիական սխեմայի: Դրանք են.
- աստիճանի բարձրությունը՝ 2.5 մ,
-աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը՝ 15մ.
հանքաստիճանի աշխատանքային ճակատի երկարությունը ՝ L= 100 մ:
Մակաբացման ապարների հեռացումը նախատեսվում է իրականացնել բուլդոզերով: Դրանք նախ տեղափոխվում են 15-20մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև էքսկավատորով բարձվում են ավտոինքնաթափի մեջ ու տեղափոխվում ժամանակավոր լցակույտ:
Մակաբացման ապարների ընդհանուր ծավալը տեղամասում կազմում է մոտ 55.1 հազ. մ^3, որին համապատասխանում է ընդամենը 0.17մ^3/մ^3 մակաբացման միջին գործակիցը (բազալտների ընդհանուր պաշարները կազմում են 319.9 հազ. մ^3):
Մակաբացման ապարների տարեկան ծավալը կազմում է 2.8 հազ. մ^3, իսկ հերթափոխայինը՝ 16.0 մ^3:
Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 15000 մ^3/տարի [illegible] զանգված:

02543163 ՀՈՐԴՈՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER OF REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅ

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ երեսպատման բլոկների կազմում է 3 . 5 հազ. մ³/տարի (հերթափոխայինը՝ 20 մ³/հերթ), ըստ շինարարական խճի՝ 6. 5 հազ. մ³/տարի (հերթափոխայինը՝ 37 մ³/հերթ), ըստ շինարարական ավազի՝ 5. 0 հազ. մ³/տարի (հերթափոխայինը՝ 28 մ³/հերթ):

Այսպիսով, օգտակար հանածոյի պաշարներն ընդերքում, այսինքն մարվող պաշարները Արամուսի բազալտների «Կարիսմա» տեղամասում կազմում են 319. 9 հազ. մ³, կորզվող պաշարները 291. 0հազ մ³, տարեկան մարվող պաշարները՝ 16. 5 հազ. մ³, իսկ օգտակար հանածոյի կորզման գործակիցը՝ 0. 91:

Արամուսի բազալտների հանքավայրի «Կարիսմա» տեղամասի շահագործման տևողությունն ըստ նախագծային լուծումների կազմում է 20 տարի:

Մենաքարի անջատումը զանգվածից նախատեսվում է իրականացնել հետևյալ կերպ:

Հանքաստիճանի վերին մակերևույթում Komatsu PC 450 LC մակնիշի էքսկավատորի վրա սարքավորված հիդրավլիկական մուրճով (կատարում է 300-600 հարված րոպեում) ստեղծվում է ներհատ ակոս՝ 5-6 մ երկարությամբ և 15 սմ լայնությամբ ու խորությամբ:

Այնուհետև, էքսկավատորի շերեփի ատամների օգնությամբ՝ ստեղծված ակոսի ողջ երկայնքով (օգտագործելով նաև զանգվածի բնական ճեղքերը), իրականացվում է մենաքարի պոկում բազալտային զանգվածից:

Մենաքարի հեռացումը հանքախորշից դեպի բլոկների մասնատման տեղամաս նախատեսվում է իրականացնել Т-130 մակնիշի բուլդոզերի օգնությամբ:

Մենաքարի մասնատումը բլոկների նախատեսվում է կատարել հորատասեպային եղանակով:

Բլոկների կոպտամշակումը կարելի է մասնակիորեն կատարել հիդրավլիկ մուրճի միջոցով:

Ստացված բլոկները տրանսպորտի մեջ բարձելու համար օգտագործվում է KS-4572 մակնիշի ավտոմոբիլային կռունկը:

Ճեղքավոր և խոռոչավոր բազալտները և բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած ոչ կանոնավոր տեսքի, բլոկների համար ոչ պիտանի բազալտները համապատասխանաբար 28 և 37 մ³/հերթ ծավալներով Т-130 բուլդոզերով տեղափոխվում են միչև 15-20 մ, կուտակվում աշխատանքային հրապարակում, այնուհետև ТО–30 միաշերեփ անվավոր բարձիչով բարձվում և տեղափոխվում են վերամշակման արտադրամաս:

Վերամշակման արտադրամասը՝ СМД-186 մակնիշի ջարդիչ տեսակավորող կայանքը նախատեսվում է տեղակայել տեղամասի հարավ-արմտյան մասում՝ բացահանքի արևմտյան կողին հարող հատվածում՝ 150 մ² մակերեսով տարածքում:

СМД-186 մակնիշի ջարդիչ տեսակավորող կայանքի ժամային անձնագրային արտադրողականությունը կազմում է 40 մ³/ժ, բեռնվող ապարների կտորի առավելագույն չափը՝ 340մմ, ընդունող զետեղարանի ծավալը՝ 9 մ³:

Ժամանակավոր լցակույտն իր վերջնական դիրքում կունենա մեկ հարկ՝ 0-15 մ (միջինը՝ 7. 5 մ) բարձրություն, իսկ զբաղեցրած մակերեսը կկազմի մոտ 0.73 հա, ընդամենը 49684մ³ ծավալով:

Նախատեսվում է շահագործման ընթացքում և դրա ավարտից հետո ժամանակավոր լցակույտից ապարները տեղափոխել բացահանքի մշակված տարածություն և փռել դրա հատակին:

Տեխնիկական ջրամատակարարումը նախատեսվում է կազմակերպել КамАЗ 43118 մակնիշի ջրցան մեքենայով:

Խմելու ջրի մատակարարումը նախատեսվում է իրականացնել ВЦ-1.2 մակնիշի ջրի ցիստեռնով:
Կենցաղային կեղտաջրերը՝ 0.39 մ3 օրական ծավալով նախատեսվում է լցնել բետոնե լցարան, որտեղից պարբերաբար հեռացվելու են հատուկ ծառայության ուժերով:
Նախատեսվող գործունեության ընթացքում բնապահպանական ծախսերը կազմում են մոտ 19.7 մլն. դրամ:
Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո հանքի փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը կազմում է մոտ 4.5 մլն դրամ:
Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության գործունեության տարածքում կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:
Արամուսի բազալտի հանքավայրի «Կարիսմա» տեղամասում և դրան հարակից բնակավայրերում բնության և պատմության հուշարձաններ հաշվառված չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար:

-Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաներում՝ դրանց հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար (եթե առկա է նման հնարավորություն):

-Մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար: Հանքավայրի տարածքում իրենց սպառողական հատկությունները կորցրած, բանեցված յուղերի և քսյուղերի պահեստավորում, պահպանում չի նախատեսվում:

-Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, համաատասխան աղբահավաք ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

-Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մոտեցնող ճանապարհներ և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

-Կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար նախատեսվում է դատարկել հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով:

Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

-առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

-ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

-տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք, կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

-Կենդանական և բուսական աշխարհի պահպանության նպատակով շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց և հարակից տարածքների բնակիչների իրազեկվածության համար, անհրաժեշտության դեպքում, շին. հրապարակում կտեղադրվեն տարածքին բնորոշ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների նկարներով պաստառներ, որպեսզի դրանք լինեն հեշտ ճանաչելի և ապահովվի դրանց պահպանությունը:

-Հանքավայրի տարածքի պարագծով կտեղադրվեն նախազգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել պատակահան և/կամ անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:

հանքավայրի շահագործման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ:

-Հողային ծածկույթի մշտադիտարկումներ տարեկան մեկ անգամ:

-Վայրի բնություն, կենսամիջավայրի մշտադիտարկումներ տարեկան մեկ անգամ: Մշտադիտարկումների վրա տարեկան նախատեսվում է ծախսել 200 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԿԱՐԻՍՄԱ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքի Արամուս բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Կոտայքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
-Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
-Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Կարիսմա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԿԱՐԻՍՄԱ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան